

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՆԱԴՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

13 մարտի 2012թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովիանիսյանի (գեկուցող), Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ Ա. Մովսեսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հոկտեմբերի 5-ին Երևանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 11 հունվարի 2012թ. ՆՏ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Նամաձայնագիր/ ստորագրվել է 2011 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Երեւանում:

Նամաձայնագրի նպատակը Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների զարգացումը խթանելը եւ հնարավոր առավելագույն միջոցներով այս բնագավառում միջազգային համագործակցությանը նպաստելը, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի եւ «Միջազգային օդային փարանցիկ հաղորդակցությունների մասին» համաձայնագրի սկզբունքները եւ դրույթներն այս հաղորդակցությունների նկատմամբ կիրառելն է:

Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվում է՝

- Քուվեյթի Պետության կառավարությանը փրամադրել Նամաձայնագրով սահմանված իրավունքները՝ նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից երթուղիների ցանկի համապատասխան մասում սահմանված երթուղիներով միջազգային օդային հաղորդակցությունների հաստատման եւ շահագործման նպատակով,
- Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս փրամադրել Նամաձայնագրով նախատեսված արտոնություններ, ինչպիսիք են՝ Նայասրանի Նանրապետության փարածքի վրայով անվայրէջք թռիչք կատարելը, նշված փարածքում կանգառներ կատարելը ոչ առեւտրային նպատակներով, նշված փարածքում կանգառներ կատարել՝ չվացուցակում նշված երթուղու կետում կամ

կերտում միջազգային երթելակության ընթացքում ուղեւորներ, բեռ եւ փոստ օդանավ վերցնելու եւ իջեցնելու նպատակով,

- Նայաստանի Նանրապետության կառավարության կողմից ավիաընկերության կամ ավիաընկերությունների նշանակման վերաբերյալ դիվանագիտական ուղիներով գրավոր հայտնել մյուս Պայմանավորվող կողմին՝ սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություններ շահագործելու նպատակով,

- որպես արտոնություններ փրամադրող կողմ՝ թույլատրել մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությանն սկսել օդային հաղորդակցություններ,

- Նայաստանի Նանրապետության փարածքում գրավող օդանավակայանների եւ այլ ավիացիոն միջոցների օգտագործման համար Քուվեյթի Պետության կառավարության նշանակած ավիաընկերության կամ ավիաընկերությունների օդանավի համար սահմանված վճարները չնախատեսել ավելի բարձր, քան նույնպիսի միջազգային հաղորդակցություններում ներգրավված իր ազգային ավիաընկերության կամ ավիաընկերությունների համար սահմանված վճարներն են,

- Քուվեյթի Պետության կառավարության նշանակած ավիաընկերության կամ ավիաընկերությունների օդանավը, որը շահագործվում է միջազգային օդային հաղորդակցություններում, ինչպես նաեւ դրա հիմնական սարքավորումները, պահեստամասերը, վառելիքի եւ քսայուղերի պաշարները, օդանավում առկա պաշարները (ներառյալ մթերքը, ըմպելիքները եւ ծխախոտը), որոնք նախատեսված են թռիչքի ընթացքում սպառման համար, ազատել բոլոր փեսակի մաքսատուրքերից, փեսզական վճարներից կամ այլ փութերից ու հարկերից՝ պայմանով, որ նման սարքավորումները եւ պաշարները մնան օդանավում մինչեւ դրանց վերարտահանումը,

- Քուվեյթի Պետության կառավարության նշանակած ավիաընկերության կամ ավիաընկերությունների շարժական սեփականությունը, ինչպիսիք են՝ գրասենյակային սարքավորումներն ու գրենական պիպույքները, ճամփորդական փաստաթղթերը, ներառյալ ավիաընկերության փոմսերը, ավիաբեռնագրերը, ինչպես նաեւ գովազդային նյութերը եւ փարածման համար նախատեսված առարկաները, որոնք ներմուծվել են Նայաստանի Նանրապետության փարածք, ազատել բոլոր փեսակի մաքսատուրքերից, փեսզական վճարներից կամ այլ փութերից ու հարկերից,

- թույլատրել Քուվեյթի Պետության կառավարության նշանակած ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին պաշտոնական փոխարժեքով ազատ փոխանցել

իր փարածքում սրացված եկամուտների ավելցուկները՝ կապված Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից ուղետորների, ուղեբեռի, փոստի եւ բեռի փոխադրման հետ,

- հնարավորություն ընձեռել Քուվեյթի Պետության կառավարության նշանակված ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին Նայասփանի Նանրապետության փարածքում հիմնելու իրենց սեփական տեխնիկական եւ առեւտրային ներկայացուցչությունը,

- Նայասփանի Նանրապետության փարածքով փարանցվող ուղետորները, ուղեբեռը եւ փոստը ենթարկել մաքսային եւ (կամ) ներգաղթի պարզեցված ստուգման,

- Նայասփանի Նանրապետության փարածքով փարանցվող՝ փարանցիկ բեռն ու ուղեբեռն ազատել մաքսատուրքերից, տեսչական ստուգումներից եւ այլ ազգային տուրքերից կամ գանձումներից, եթե դա ուղիղ փարանցում է,

- վերահաստատել, որ միջազգային իրավունքից բխող՝ Պայմանավորվող կողմերի իրավունքներին ու պարտավորություններին համապատասխան քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն ապօրինի միջամտություններից պաշտպանելու՝ միմյանց նկատմամբ իրենց պարտավորությունը կազմում է Նամաձայնագրի անբաժանելի մասը,

- Քուվեյթի Պետության կառավարության խնդրանքի դեպքում փրամադրել անհրաժեշտ ողջ օժանդակությունը՝ կանխելու համար քաղաքացիական օդանավերի անօրինական զավթման գործողությունների եւ նման օդանավերի, դրանց ուղետորների եւ անձնակազմերի, օդանավակայանների եւ օդագնացային միջոցների անվտանգության դեմ ուղղված անօրինական այլ գործողությունները, ինչպես նաեւ քաղաքացիական ավիացիայի դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք:

Նամաձայնագրով նախատեսված է Նամաձայնագրի մեկնաբանումից կամ կիրառումից ծագող վեճի դեպքում Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների կողմից վեճերի կարգավորման ընթացակարգը:

Նամաձայնագիրը ենթակա է գրանցման Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում:

Նամաձայնագիրն ունի Նավելված, որը հանդիսանում է Նամաձայնագրի բաղկացուցիչ մասը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի հոկտեմբերի 5-ին Երեւանում ստորագրված՝ Նայասպանի Նանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13 մարտի 2012 թվականի
ՍԴՈ- 1019